

Mets ba□aran hayerēnē ōsmanerēn

Petros Zēk□i Karapetean

ارمنیجه دن ترکجه مکمل لغت

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԷ ՕՍՄԱՆԵՐԷՆ

ԳԻՏԱԿԱՆ, ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՌԵՐՈՒ

ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ

ԲԱԶՄԱԹԻՒ ՈՃԵՐՈՎ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ՃՈԽԱՑԱԾ

ԻԲՐ 50,000 ԲԱՌ, ՈՃ ԵՒ ԱՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ՁԷՔԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՕԺՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆ ՔՐԳԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ ՕՍՄԱՆԵՐԷՆ, ՊԱՐՍԿԵՐԷՆ ԵՒ ԱՐԱԲԵՐԷՆ ԼԵԶՈՒԱՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ

1907

معارف نظارت جليله‌سنك فى ٢٣ كانون اول سنه ٣١٩ تاريخلو
و ٢٠٥ نومرولو رخصتنامه‌سيله طبع اولنمشدر

ԶՕՆ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՄԵԾ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ

ԵՒ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻՆ

ՈՂԲԱՑԵԱԼ

ՌԵԹԷՈՍ ԷՖ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

որ երեսուն երկար տարիներ համանուն Երկրորդական Վարժարանին մէջ բազմաթիւ սերունդներ կրթեց, դաստիարակեց անընդհատ. ու ես մին իր սաներէն Տասնհինգ ամբողջ տարիներ իբրեւ Օսմաներէնի ուսուցիչ վարժարանին մէջ աշխատած եւ մեծապէս օգտուած Իր մանկավարժական անյեղլի սկզբունքներէն եւ անժխտելի լայնածաւալ եւ բազմակողմանի հմտութիւններէն, զոր պարտք կը սեպեմ հոս յայտարարել:

Զօնս սիրով ընդունեց, երբ իրեն հաղորդեցի մահուանէն ութ տասն օր առաջ, եւ խոստացաւ Զատկական արձակուրդին բարոյականին վրայ իր տեսութիւնն գրել. բայց, աւա՜ղ, այդ արձակուրդին չկրցաւ հասնիլ . . . :

Յիշատակը մեր սրտին մէջ անջնջելի պիտի մնայ մեր մեծ Դաստիարակին, եւ հաստատ վերջին շունչս պիտի աշխատիմ անոր անունը անմահացնող մեծ յիշատակարանին՝ Պէրպէրեան Վարժարանին յառաջդիմութեան, որուն ղեկը ինքն իսկ անձամբ ինծի յանձնեց ասկէ 11 տարի առաջ, երբ ստիպուած էր ճամբորդութեան մը ելնել:

Անձնուէր սանը

7 Յուլիս 1907 — ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



ՀԵՂԻՆԱԿԸ

مقدمه

عصر کزین معارف رهین حضرت پادشاه اعظمیده اون طقوز یکرمی سنه‌یه قریب بر مدت مدیده‌دن بری مکاتب غیر مسلمه‌نك اعدادی ورشدی صنفلرنده حلقهٔ تدریسمده بولنان طلبه‌یه لسان لطافترسان عثمانی‌یی علی قدر الوسع والاقتدار حسن تعلیم ایتمکده وعموم اطفال مملکته لسان مذکوری بر طرز نوین واصول بهین ایله تدریس ایده‌بیلمك مقصد خیر مرصدیله متعدد کتب تدریسیه تألیف وموقع انتشاره وضع ایده‌رك ابنای جنسمه بر خدمت ناچیز ابراز ایتمش اولمق امنیه‌سیله افتخار ایلمکده بولنمش وبو سایه‌ده مظهر تلطیف عالی ونائل رغبات وتوجه عمومی اولمش ایسه‌مده ارمنیجه اوکره‌نن ترك طلبه‌سنك وترکجه تحصیل ایدن ارمنی شاکردانك ویا مذکور ایکی لسانده اولدقجه معلومات کسب ایتمش اولوب ده کندی باشنه ایلریلمك هوسنده بولنانلرك مکمل بر لغت کتابی بولنمدیغندن چکمکده اولدقلری مزاحم ومشاق هر کون مصادف انظار عاجزی اولمغله مشاغل کثیرهٔ بندکانه‌م صره‌سنده بو نقصانك‌ده اکمالنه آنجق اون بش سنه ظرفنده بعون الله تعالی موفقیت حصوله کلدیکنی و «ارمنیجه‌دن ترکجه‌یه مکمل لغت» کتابمزك هر وجه ایله استفاده‌یه کافی وارباب مراجعتك احتیاجنی تهوینه هر صورتله الویرشلی اولمسنه خواب

وراحت بندكانه‌مى ترك ايله اوزون كيجه‌لرى صباحلاديغمى وعلوم وفنون شتانك اصطلاحات وتعبيرات عديده‌سنى فرانسزجه معادللريله تحرير واكثر محلده كلماتك يكديكرندن اولان جزئى كلى فرقى ونكات ونقاط مهمهٔ سائره‌يى كوسترمك اوزره ايجاب ايتديكى قدر مثاللر ايراد وتسطير ايلديكمى وارمنيجه ده كثير الاستعمال اولوب‌ده لغت كتابلرينه كچمش اولميان وياكلش ضبط اولنمش ومؤخراً حادهٔ تدقيق وتنقيددن كچيريله‌رك تصحيح ايدلمش اولان ادبى، فنى بر چوق لغاتى جمع وتلفيق ايدوب اثر بندكانه‌مه درج ايتديكمى بيان واطفال واخوان مملكته اشبو اثر عاجزانه‌مله‌ده بر خدمت ناچيزانه ابراز ايتمك شرفنى احراز ايده‌بيله‌جكمى علاوةً درميان ايلرم .

همان جناب تنسيق فرماى جملهٔ كائنات وترتيبساز اجزاخانهٔ ممكنات حامىٔ اعظم علم وعرفان ولى نعمت بى امتنان الغازى ابو المغازىٔ بى مدانى سلطان (عبد الحميد) خان ثانى افنديمز حضرتلرينى مادام الملوان اريكه پيراى شوكت وشان بيورسون آمين

مؤلفى
ذكى

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր երկրորդական եւ բարձրագոյն վարժարանաց վերին կարգերու մէջ ունեցած երկարամեայ պաշտօնավարութեան միջոցին անձամբ տեսած ենք թէ աշակերտները որքա՜ն դժուարութիւն կը կրէին թարգմանութեան եւ շարադրութեան ատեն եւ հայերէնէ օսմաներէն նպատակայարմար բառարան մը չգտնուելուն համար անյաջողութեան կը մատնուէին: Թէեւ տասն եւ հինգ տարիէ ի վեր սկսած էինք այս պակասն լրացնելու աշխատիլ եւ ձեռնարկած էինք պատրաստելու բառարանս, բայց մէկ կողմէ հայերէն աշխարհաբար կատարեալ եւ ամփոփ բառարանի մը չգոյութիւնը եւ միւս կողմէ հայերէնէ օսմաներէն բառարաններու անբաւականութիւնը ստիպեցին որ նախ հայերէն աշխարհաբար բառարան մը մէջտեղ դնենք: Այս նպատակին իրագործման համար մեր բազմազբաղ վիճակին մէջ ամէն օր հետազօտութիւններ կատարելով՝ հաւաքեցինք շատ մը ընտիր գրական, գիտական ու գաւառական բառեր, որոնք կարող գրագէտներու, լեզուաբաններու գրչին տակ յաճախակի գործածութեամբ եւ քննադատութեամբ ճշգրտուեցան եւ վաւերական դարձան: Յետոյ հայերէններուն դիմաց դրինք թուրք., արաբ. եւ պարսկ. համապատասխանները, ոչ թէ քմահաճ կերպով, այլ քննող ոգւով եւ ճշդեցինք օսմ.ի մէջ մուտ գտած այն անճշդութիւնները, որոնք բուռն քննադատութեամբ իրենց հնօրեայ տարազն ու ձեւն փոխեցին: Բաց աստի բառերու առումներն ճշդող եւ երանգներն ցուցնող բազմաթիւ օրինակներն, զորս դը-

րած ենք բառարանիս մէջ, մեր ժամանակին մեծ մասը զբաղած են: Գիտական բառերու Ֆրանսերէն համապատասխանները ալ ջանացինք դնել ըստ մեծի մասին, մըտածելով որ անոնց ներկայութիւն միշտ օգտակար կրնայ ըլլալ բառարանս գործածողներուն, ըստ որում մեր մէջ կը պակսին կանոնաւոր գիտական բառարան: Թուրք բառերու ուղղագրութեան գալով՝ պաշտօնական ու գրականն գրեթէ հաւասարապէս դրած ենք, նկատելով որ դեռ ուղղագրական խնդիրն իր վերջնական լուծումը չէ գտած:

Դժուար ընթեռնլի բառերուն արտասանութիւնն ալ դրինք ի դիւրութիւն բառարանս գործածողներուն, բայց հոս զանց ըրինք բառերուն ստուգը եւ ազգութիւնը ցոյց տուող նշաններ գործածել, վերապահելով Օսմաներէնէ Հայերէն Բառարանին, ուր անհրաժեշտ է գործածել:

Ըստ որում Կրթական Բարձր Նախարարութիւնը հայերէնի ուսուցումը պարտաւորիչ ըրած է թուրք երկրորդական եւ բարձրագոյն վարժարանաց մէջ եւ մի քանի տարիէ ի վեր Պոլսոյ Թուրք երկրորդական վարժարանաց բերանացի հարցաքննութեանց պաշտօնապէս քննիչ կարգելու պատիւն շնորհած է, փորձով տեսանք թէ Թուրք ուսանողներն հայերէնը հասկնալու համար մեծ դժուարութիւն կը կրեն ՀԱՅԵՐԷՆԷ ՕՍՄԱՆԵՐԷՆ կատարեալ բառարան մը չունենալով ի ձեռին:

Վստահ ենք թէ սոյն բառարանս այս կարգի ուսանողաց ալ մեծապէս օգտակար պիտի ըլլայ, քաջալերելով զանոնք հայ լեզուի ուսման մէջ:

Բառարանիս մասին աւելի երկար խօսիլ աւելորդ կը նկատենք, թողլով որ քիչ մըն ալ գործն ինք խօսի:

7 Յուլիս 1907
Մաքրիգիւղ

Հեղինակն
ՊԵՏՐՈՍ ՉԷՔԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Հայերէն բառերը հայերէնի կարգով շարուած են. իսկ օսմաներէններն թուրքերէնի կարգով, այսինքն՝ աջէն դէպ ի ձախ. միայն թէ դիտելի է որ, երբ տող ընդ մէջ հայերէն բառ մտած է, կամ օրինակ եւ կամ տառացուած, այն ատեն հայերէնի կարգով շարուած են:

2. Նոյն բառը չկրկնելու համար (—) սա գիծը գործածուած են:

3. Երբ տողէ մը փոքրիկ մաս մը աւելցած է, այդ մասը վերի տողը հանուած են կամ վարի տողը տարուած սա տեսակ [փակագծով, վերի կամ վարի տողին մէջ պարապ մնացած տեղը լեցնելով:

4. (—ութիւն) վերջաւորուած բառերն երբեմն տեղւոյն անձկութեան պատճառաւ չեն կրցած ամբողջութեամբ դնել, հետեւաբար սապէս (ութ.) շարել տալ տպուած են:

5. Բառի մը երկրորդ ձեւը երբեմն քովը փակագծի մէջ կամ առանց փակագծի դրուած են, երբեմն ալ, երբ երկրորդ ձեւը մասնիկով մը միայն կը տարբերի, տողակէտ մը վերջ մասնիկը դրուած են, սապէս (կի-տաբփանց, — իկ):

6. Բառի մը զանազան առումները ցուցընելու համար, 1, 2, 3, 4, 5 եւայլն թուանշանները գործածուած են:

7. (ث)ի տեղ (ß), (ذ)ի տեղ (ꝛ), (خ)ի տեղ (Ջ) գործածուած են, ըստ որում (գ)ն (գ)էն զանազանել

դժուար է եւ այս երկու գրէն յաճախ գործածուածն ալ (ث)է եւ ոչ թէ (ط). ինչպէս նաեւ (ن) գիրը նոսրին մէջ (ن) եւ (ڹ) գրերէն դժուար է զանազանել, որով (ڭ) գործածել յարմարագոյն սեպած ենք:

8. Երկար (ى)ն քիչ մը երկարելու համար (ی) գիրը գործածած ենք:

9. (ع) գրին մասնաւոր արտասանութիւնը կարենալ ցուցընելու համար հայերէնի մէջ սա (') շեշտը գործածած ենք:

10. (خ) գիրը ուր որ աւելի (ح)ի ձայն կը հանէ փոխանակ (خ)ով գրելու (ح)ով գրած ենք. ինչպէս նաեւ (غ) գիրը (ق)ով գրած ենք, այն բառերուն մէջ ուր (ق) ձայնը արտաբերել աւելի ախորժելուր կ'ըլլայ:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Ած.	Ածական
Աղ. աղաւ.	Աղաւաղեալ
Աշխ.	Աշխարհագրական
Ասաց. ասց. աս.	Ասացուածք
Արբ.	Արաբերէն
Արհ.	Արհեստական
Բարոյ.	Բարոյական
Բժշ. Բժշկ.	Բժշկական
Բնգտ. բնգ.	Բնագիտական
Բնլծ.	Բնալուծական
Բուս.	Բուսաբանական
Գրագ. գրգտ. գրակ. գրգ.	Գրագիտական
Եզ.	Եզակի
Երժ. երժշ.	Երաժշտական
Երկ.	Երկուորական
Երկրբ.	Երկրաբանական
Երկչ. երկրչփ.	Երկրաչափական
Էթ.	Էթմէք
Էթտ.	Էթտիրմէք
Էտլ.	Էտիլմէք
Թուա. Թուաբ.	Թուաբանական
Ժող.	Ժողովրդական
Իգ.	Իգական
Իմաս.	Իմաստասիրական
Իրաւ.	Իրաւագիտական
Ծով.	Ծովային
Կենդ. կեն.	Կենդանաբանկն.
Հանք. հնք.	Հանքաբանական
Հմձ.	Համաձայնական
Ճար.	Ճարտարապետկն.
Մաթ.	Մաթեմաթկակն.
Մեք.	Մեքենագիտական
Մրդ. մրդկ. մրդկզ.	Մարդակազմկն.
Յգ.	Յոգնակի
Նիւթկ.	Նիւթական
Նշն. Նշնկ.	Նշանակութեամբ
Չփգտ. չափ.	Չափագիտական
Պարսկ. պրս. պարս.	Պարսկերէն
Ռմկ.	Ռամկական
Տ.	Տե՛ս
Տիեզ.	Տիեզերագրական
Տղչ.	Տաղաչափական
Տրմ.	Տրամաբանական
Փիլ.	Փիլիսոփայական
Ք. գոր. ք. գործած.	Քիչ գործածական
Քեր. քերկ.	Քերականական
Քիմ.	Քիմիական
Օլ.	Օլմաք
Օլն.	Օլունմաք
Օսմ.	Օսմաներէն
Օր.	Օրինակ
Օրէնս. օրէն.	Օրէնսգիտական

Մեծ հաճոյքով ստացանք ազգիս բազմարդիւն Պատրիարք, անզուգական իմաստասէր եւ լեզուաբան Տ. Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի գնահատական սքանչելի մէկ նամակը, որ բառարանիս գլուխը կը զարդարէ, քաջալերելով բոս ամենայնի զմեզ, որուն համար կը փութանք հոս հրապարակաւ յայտնել խորին երախտագիտութիւն Նորին Բարձր Սրբազնութեան, որ Իւր բազմադիմի եւ բազմազան աշխատութեանց մէջ գիտէ Իւր բարձր հովանին տարածել Կրթական ու Բարեսիրական հաստատութեանց վրայ, եւ քաջալերել գրականութեան ամէն կարգի մշակներն առ հասարակ:

Գ. Կ.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

9 Յուլիս 1907

Ազնուափայլ Սիրելի

ՊԵՏՐՈՍ ՉԷՔԻ ԷՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

եւն. եւն. եւն.

Հայերէնէ Օսմաներէնի բառարանին մի մասը տեսայ, այնչափ մը՝ որչափ բաւական էր գործին վրայ ճշդութեամբ գաղափար կազմել եւ ամբողջութիւնը գնահատել:

Բառարաններ, իրենց անսեթեւեթ կերպին ներքեւ՝ կարեւոր, դիւրին երեւցած ձեւին ներքեւ՝ տաժանակիր, ամէն տեսակ ուսման եւ ուսումնասիրութեան համար՝ անհրաժեշտ, երկասիրութիւններ են. եւ ով որ բառարան կազմելու հետամուտ կը լինի, կարծես թէ առաքինական զգացմանց պաշարի ալ պէտք ունի, իր ժանրատաղտուկ աշխատութիւնը եւ համբերութեան օգուտը իրարու մերձեցնելով: Դուք, Սիրելի, այդ կամքը ունեցեր էք, կը տեսնեմ:

Արդիւնքը, համարձակ կրնամ ըսել, թէ համապատասխանած է նպատակին. եւ Հայերէնէ Օսմաներէնի շէնք շնորհք բառարանի մը բացարձակ պէտքը կը լեցնէ: Պետական լեզուին ստացած ընդարձակութիւնը եւ գործնական զարգացումը, եւ մերազգիներուն առ հասարակ անոր ուսման հետապնդութիւնը՝ այդպիսի ձեռնարկի մը պէտք ունէր: Այդ պէտքը կը լրացնէք. կը խնդակցիմ:

Արտադրած երկերնիդ, տաճկաբանական մասնագիտու-թեան մտնել չուզելով այլ, իւր ճոխ յօրինուածովը, բա-ցատրութեանց պարզութեամբը, ոճերու եւ դարձուածներու առատութեամբը, ընտիր եւ գովելի գործ մը եղած է. կը շնորհաւորեմ:

Թէ՛ դպրոցական օգտակարութեան, թէ՛ առձեռն կիրա-ռութեան, թէ գործնական շահեկանութեան, թէ գիտական օժանդակութեան, եւ թէ ամբողջական կատարելագործու-թեան կողմէ, ամէն դասակարգերու համար յոյժ եւ յոյժ պիտանի եղած է Ձեր երկը. կը յանձնարարեմ:

Տայ Ձեզի Աստուած՝ ա՛լ աւելի տոկունութիւն եւ յա-ջողութիւն, եւ շատ տասնեակներով հարստացնէք Ձեր պի-տանի երկասիրութեանց աղիւսակը. կը բարեմաղթեմ:

Եւ Մնամ աղօթարար

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

ادبا وشعرای مشهورهٔ عثمانیه‌نك اثر عاجزی حقنده لطفاً اهدا بیوردقلری تقاریض دقایق آمیزك صورتلری علی مراتبهم درج صحیفهٔ ابتهاج قلنه‌رق کسب شرف ومباهات اولندی :

شورای دولت تنظیمات دائرهٔ علیه‌سی اعضای کرامندن لسان ادبی حاضرك مجدد اکبری وشعرا وادبای زمانك معلم اشهری عطوفتلو رجائی زاده اکرم بك افندی حضرتلری طرفندن لطفا اهدا بیوریلان تقریض حکمت ریزك عیناً صورتیدر :

افندم

ارمنیجه‌دن ترکجه‌یه ترتیب ایتدیککز لغتنامه‌یی آرزوکزه اتباعاً کوزدن کچیردم . ارمنیجه‌یی بر آز اوقومش آکلامش اوله‌یدم اثرکزك ماهیتی حقنده سویلیه‌بیله‌جکم بر ایکی سوزی دها زیاده قناعتله سویلردم. مع‌مافیه ترکجه تفسیرات وتعریفاتکزده مشهود اولان دقت واصابت وسلامته نظراً لغتنویسلك امر مهم ومعتناسنجه‌ده اهل اولدیغکزه حکم ایدییورم . اهلیتله کوریلن، یاپیلان ایشلرده ایسه موفقیت طبیعیدر .

حق اصالت و وجوه لیاقتله دولت عثمانیه‌نك لسان رسمیسی، اقوام مختلفهٔ عثمانیه‌نك لسان عمومیسی اولان عثمانلیجه‌یی تبعه‌دن هر فردك بیلمسی، اوکرنمسی واجبدر. ارمنی قومی ایسه عثمانلیجه ایله من القدیم مألوفدرلر. شو قدرکه لسان عثمانی‌یی

اربابندن تحصیل ایتمه‌ین ارمنیلر تکاملده، تلفظده ــ علی‌الخصوص تلفظده ــ او کوزل ترکجه‌نك حقنی ویرمزلر .

بك اوزون تتبعات وسنه‌لرجه اقدامات ایله میدانه کلدیکی بك نظرده آکلاشیلان لغاتنامه‌کز عثمانلیجه‌یی لایقیله اوکرنمك، کوزل سویله‌مك ایسته‌ین ارمنی وطنداشلرمز ایچون زیاده‌سیله نافع بر اثر معتبردر .

بناءً علیه همت مصروفه‌کزی عاجزانه تقدیر وتبریك ایدر وفائده‌سی دها عمیم آثار برکزیده تألیفنه موفقیتکز ایچون دعا خوان اولورم .

بیوکدره ١٤ تموز سنه ٣٢٣

رجائی زاده

اکرم

ادبای عثمانیه‌نك نكته‌دانی وشعرای زمانك مایه الافتخاری مطبوعات داخلیه مدیر معاونی سعادتلو فائق بك افندی حضرتلری طرفندن اهدا بیوریلان تقریض رعنانك عیناً صورتیدر :

عزتلو بدروس ذكی افندی برادرمزه

افندم

ارمنیجه‌دن تركجه‌یه جمع وترتیبنه همت بیوردیغكز لغتك نشر اولنان جزءلری منظور دیدهٔ ابتهاج اولدی .

سایهٔ عدالتوایهٔ سلطنت سنیه‌ده یدی عصردن بری حسن آمیزشله جسم واحد حكمنه گیرمش اولان بو ایكی عنصر عثمانی‌یی یكدیگره بر قات دها تقریبه وبنیان روابطنی تشیید وتحكیمه خادم بو كبی آثار البته موجب ابتهاج ومسار در .

لغت یازمق مشكل بر ایشدر. هانكی لسانلرك لغاتی یازیله‌جق ایسه او لسانلرك كافهٔ دقایق وغوامضنه واقف، یعنی اشتقاقنه، معنای موضوع ولازمیسنه، صور مختلفهٔ استعمالنه، الحاصل كنهنه عارف اولمق لابددر. آز چوق بو شرائطی جامع اولمیان بر آدم لغت یازمق صلاحیتنی حائز اوله‌مز. ذات عالیكز ایسه بو شرائطی حائز اولانلردنسكز . زیرا لسان مادرزادكز اولان ارمنیجه‌ده‌كی وقوف ومعلومات كامله‌كز معارفندان اهل لسانك تصدیق وشهادتلریله درجهٔ علم الیقینه واصل اولدیغی كبی تركجه‌ده‌كی اقتدار

وكفايتكز دخی سنين وفيره‌دن بری بعض مكاتب خصوصيه‌ده لسان عثمانی تدريساتنه وخاصةً ادبياتنه حصر اشتغال ايلمكز ثمره‌سی اولمق اوزره وجوده كتيريلن علمی وادبی بر چوق تركجه مؤلفات مقبوله ميدانده اولمسيله وارستهٔ اتيان دلائلدر .

بناءً عليه امثالنه قات قات راجح اولديغنده قطعا اشتباه اولميان شويله بر اثرك تأليف ونشرينه واقع اولان همت وموفقيتكزدن طولايی صميمانه عرض تقديرات وتبريكات ايله ولی نعمت بی منتمز، حامیٔ هنر ومعرفت پادشاهمز افنديمز حضرتلرينك سايهٔ فيوضاتوايهٔ شاهانه‌لرنده توالیٔ موفقيات والا كزی تمنی ايلرم افندم

فی ١٠ تموز سنه ٣٢٣

مطبوعات داخليه مدير معاونی

فائق

اديب حكمت سمير وشاعر بی نظير اقدام جريدهٔ فريده‌سی سر محرر كمالات مظاهری سعادتلو احمد راسم بك افندی حضرتلری طرفندن تحريرينه همت بيوريلان تقريظ بديعك عيناً صورتيدر :

ارمنی مكاتبنده لســان عثمانينك حائز اولديغی اهميتی بحق اظهار ايده‌جك بر دليل مادی آرانيله‌جق اولورسه بو كتابی ارائه ايتمك كفايت ايدر ؛ چونكه منظور عاجزانه‌م اولان اقسامنده

عثمانلی لساننك شیوه وطرز ادبنه موافق تقابلات وتفسیراتنه مصادف اولدقدن ماعدا اصطلاحات فنیه وعلمیه وصناعیه‌نك‌ده مجتمع اولدیغنی مشاهده ایلدم که بر لغت کتابنده آرانیله‌جق مزیات تألیفیه‌نك‌ده الك مهملری بونلردر.

کتابده ایکنجی بر فائدهٔ لسانیه دها وار که او دخی (لسان ساده) و (لسان کتابت) دیدیکمز ایکی ماهیت تحریریه وتکلمیه‌نك بر آره‌ده جمع ایدلمش اولمسیدر. سویله‌مك ایله یازمق آره‌سنده نه فرق وارسه جمله‌سی بو اثر کزیده‌ده اطرافیله کوزه‌دیله‌رك ایضاح وتبیین ایدلدیکی کبی احوال املائیه دخی اونودلمامشدر. هر ایکی لسانده‌ده وقوف تامی ایجاب ایتمکله برابر سنه‌لرجه صرف همت وغیرته ویك چوق زحمت ومشقته محتاج اولان بویله بر تألیف نافعه موفقیت کامله‌لرندن طولایی ذکی بك افندی‌یی تبریك ایدر ومن جهة لسان مادرزادمه تعلق ایدن خدمت مبرورهٔ تحریرانه‌لرندن طولایی عرض تشکرات ایلرم.

۱۸ تموز سنه ۱۳۲۳ احمد راسم

معارف نظارت جلیله‌سی تفتیش ومعاینه هیئتی اعضای کرامندن مکتب ملکیهٔ شاهانه ارمنیجه معلمی وترکار میاننده ارمنیجه‌ده‌کی اقتدار ومعلومات کامله‌سیله معروف بولنان سعادتلو محمد ثریا بك افندینك اهدا بیوردقلری تقریض بدایع زیرك عیناً صورتیدر :

هر قومك یکدیکرینه افادهٔ مرام ایلمسی لسان ایله قائم واو لسانك تکملاتی کذلك عمران بی پایان دیمك اولان لغتلرك توسعی ایله دائم اولدیغی وارستهٔ دلائل ونقول وبو جهت معلوم ارباب عقولدر. ایشته بو قبیلدن اولمق اوزره علوم وفنونك شعبات مختلفه‌سنده آرایشیاب ساحهٔ مطبوعات وموضوع دستکاه ترقیات اولان کتب ورسائل میاننده لغت کتابلری انظار استفاده‌یی تنویر وترقیات مدنیه ایله متناسب نیجه تکملاتی تولید ایلدیکی کبی سایهٔ کمالاتوایهٔ حضرت پادشاهیده مکاتب عالیه پروغراملرینه وضع اولنان ارمنی لسانك بحق تعلمی ایچون شاکردانه بر رهبر جدی اولمق وترکجه تحصیلنه مجبور وخواهشکر بولنان طلبه‌نك‌ده لسان عذب البیان عثمانیده تأمین ترقیلرینه خدمت ایلمك اوزره لسان مذکورك غوامض ودقایقنده وباخصوص عربی وفارسی لسانلرنده وقوف واقتدار تامی مسلم بولنان معلم محترم عزتلو بدروس ذکی افندی طرفندن بوکره ارمنیجه‌دن ترکجه‌یه اولمق اوزره ترتیب وتحریر ایدیلان لغت کتابی حقاکه حسن تألیف ومعانیٔ لغتی تعریفـ

خصوصنده امثالنه قات قات فائق و هر درلو مدح و تقریظه لایق بر قاموس بهتر اولدیغندن مؤلف کمالات متصفك بو بابده‌کی موفقیت واقعه‌سنی تبریك ایدر و بو کبی دها نیجه تألیفات معتبره ایله عالم مطبوعاته خدمتلرینی عن صمیم القلب تمنی ایلرم .

فی ١٦ تموز سنه ٣٢٣

تفتیش و معاینه هیئتی اعضاسندن مکتب
ملکیهٔ شاهانه ارمنیجه معلمی
محمد ثریا

ارمنی پطریقخانه‌سی محررات ترکیه قلمی مدیر درایت سمیری و لسان لطافت رسان عثمانیه‌ده‌کی اقتداری ایله معروف عزتلو خچادوریان قره بت افندی طرفندن لطفاً قلمه آلنان تقریض رعنانك صورتیدر :

لسان عثمانی معلمین کرامندن عزتلو بدروس ذکی افندینك
صوب والالرینه

المعروض

تألیف و طبعنه همت بیورمش اولدیغکز ارمنیجه‌دن ترکجه‌یه لغات کتابکز عاجزلرینك‌ده مطالعه گذاری اولدی. لسان عذب البیان ترکینك تعلیم و تعلمی با خصوص تبعهٔ عثمانیه ایچون نه

درجه‌لرده اهم والزم ایدوکی مستغنیٔ تعریف اولوب بو مقصد خیره مبنی متعدد درس ولغات کتابلری تألیف وطبع ونشر اولنمش ایسه‌ده ارمنی مکاتب شاکردانی وسائر خواهشکران اشبو لسان رسمی‌یی بالسهوله ومطلوب وجهله تحصیل وترجمه وکتابت جهتلرنده کسب ممارسه ایده‌بیلمك اوزره ارمنیجه‌دن ترکجه‌یه بر لغات کتابنه وبونك ترکجه کلماتی حروفات عثمانیه ایله وبعض تفسیرات وایضاحاتله اولمسنه اشد احتیاج بولندیغی چوقدن بری حس اولنمقده ایدی. شایان تشکردرکه سایهٔ معارفوایهٔ حضرت پادشاهیده وهمم والالریله شو احتیاج ونقصان تسویه واکمال ایدلدی. شاکردان ومبتدیلر ایچون تحصیل لسان لطافت رسان عثمانی‌یی تسهیل ایتمك اوزره دیکر آثار مفیده و برکزیده‌لرینه منضم اولمش وفضل وکمالکزی برقات دها اثبات ایلمش اولان اشبو اثر وهمتکزدن طولایی مع التبریك عرض تشکر ایدر وملك وتبعه‌یه بو کبی خدمات مفیده وحسنه‌لرنده توفیقات صمدانیه‌یه مظهریتلرینی جناب حقدن تمنی ایلرم افندم

مخلصلری

ارمنی بطریقخانه‌سی محررات ترکیه

فی ١٦ حزیران سنه ٣٢٣ قلمی مدیری

قره‌بت مجادوریانه

لسان عثمانی وادبیات معلم فریدی شاعر شیرین گفتار وادیب شهرتشعار عزتلو غوردیکیان استپان حلمی افندینك تحریرینه عنایت بیوردقلری تقریض دقایق ریزك عیناً صورتیدر:

لسان عثمانی وادبیات معلم اشهری عزتلو بدروس ذکی افندی جنابلرینه

عزتلو افندم

تألیفنه خامه‌ران همت اولدیغکز «ارمنیجه‌دن ترکجه‌یه» لغت حقنده مطالعهٔ عاجزانه‌مك استفسارینه عنایت بیورلمشدی . اثر عالیکزك تعیین ماهیت واهمیتی ایچون سکز اون صحیفه‌سنی کوزدن کچیرمك کافیدر . شمدی‌یه قدر ایادئ طلابده کوریلن بو کونا لغت کتابلریله قابل قیاس اوله‌میه‌جق صورتده مفصل ومکمل اولمغله هوسکاران تحصیله رهبر ترقی وتکمل اولمق مزیتنی کالیله حائزدر .

لسان عذب البیان عثمانینك ترقیات حاضره‌سیله متناسب، اصطلاحات ادبیه، فنیه، صناعیه وسائره‌یی جامع بر لغتك لزومی چوقدن بری حس اولنمقده ایدی. مشاغل کثیره‌کز آره‌سنده بو نقصانك اکمالنه بذل همتله عریض وعمیق تتبعاتی استلزام ایدن بویله مهم بر اثر وجوده کتیرمه‌کز ذات عالیکزجه بحق موجب

شرف اوله‌جق موفقیتلردن اولمغله خالصانه تبریك ایدرم. تحصیل لسانی تسهیله حصر مساعی ایلمش اولان ذات ادیبانه‌لری کبی بر معلم ذی‌اقتدارك خامهٔ عرفاننه نه‌مرتبه‌ستایشخوان اولسه‌ق آزدر.
جناب حق سایهٔ معالیوایهٔ حضرت پادشاهیده دها نیجه مؤلفات برگزیده نشرینه موفق ایلسون.

فی ۳۰ حزیران سنه ۳۲۳

ثناکاریکز

غوردیکیانه اسقیانه ملمی

مکتب ملکیهٔ شاهانه مأذونلرندن شورای دولت معاونلرندن عزتلو مدحت بك افندینك تحریرینه همت بیوردقلری تقدیرنامهٔ حکمت علامه‌در.

لسان عثمانی معلم فریدی ادیب ومؤلف اشهر عزتلو ذکی بك افندی رفیقمزك تألیف بیوردقلری لغت کتاب مستطابنه تقریضدر.

شمدی‌یه قدر محصول سعی وغیرتلری اولوب زینت افزای عالم مطبوعات اولان آثار برگزیدهٔ فاضلانه‌لرینه بر ضمیمهٔ فائقه و ایلروده انتشار ایده‌جك امثالنه بر نمونهٔ مفتخره اولمق اوزره تألیف ونشرینه موفقیت حاصل اولان «ارمنیجه‌دن ترجمه‌یه» محرر بولنان بو اثر دلپذیرلری جداً بر حس تبریك وممنونیتله مطالعه گذار عاجزی اولدی. سایهٔ سمایایهٔ حضرت خلافتپناهیده

فیوضات معارفك كلزار تجلیسی اولان مكتبلرده یوماً فیوماً
مزداد اولان ترقیات وتعالیاته همان پایان تصوری امكان خارجنده
اولوب مكاتب اعدادیه وعالیه‌دن بعضلرنده ارمنیجه دخی تدریس
اولندیغندن مكتب طلبه‌سندن ماعدا ارمنیجه تحصیلنه هوسكار
اولانلرك من كل الوجوه تأمین استفاده‌لرینه كافی وارمنیجه‌هر بر
كلمه‌نك محل استعماللرینی صورت واضحه‌ده تركی عربی وفارسی
جمل وكلمات ایله مبین ومشعر غیر موجود الامثال بویله بر دفینهٔ
همته ودها طوغریسی زمان شبابكزك اك قیمتدار اوقاتنی محتوی
اولان بویله بر كنجینهٔ فضل ودرایته ارمنیجه‌یه اولان وقوفم
اعتباریله من غیر حد بیان تقدیرات وذات عالیٔ كریم الشیملرینه
عرض تبریكات ایلرم .

مكتب ملكیهٔ شاهانه مأذونلرندن
شورای دولت معاونلرندن

مرحمت

Մեր ծանօթ լեզուագէտ բանասէրներու կողմէ գրուած գնահատական տողերը պարծանօք կը դնենք մեր բառարանին սկիզբը թուականի կարգով:

Ազն. ՊԵՏՐՈՍ ԷՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Բազմարդիւն Ուսուցիչ Օսմ. Լեզուի եւ Գրականութեան

Ազնուաշուք Սիրելի

Հայերէնէ Օսմաներէն «Մեծ Բառարան»իդ տպագրեալ մէկ օրինակը հաճած էիք ղրկել ինծ՝ իմ կարծիքս ալ ունենալու համար Ձեր այդ նոր երկասիրութեան մասին:

Ձեր բազմաթիւ հրատարակութիւններն Օսմաներէնի ուսուցման համար մ՚յնքան գնահատուած՝ ինքնին գրաւական են արժէքին «Մեծ Բառարան»իդ, որ՝ դպրոցական միանգամայն եւ հանրային օգտակարութեան նուիրուած գործ՝ ինչպէս յայտնի կ՚երեւի՝ իր տեսակին մէջ ճոխ է եւ գերազանց:

Հարկ չկայ անշուշտ անդրադառնալու այն անհուն դժուարութեանց՝ որոնց կրնայ հանդիպիլ չափակասեր բառարանի մը յօրինումը: Փորձառութեան եւ հմտութեան կրկնակ ուժերով յաղթած էք ներկայ աշխատութեան յղութեանը մէջ, որուն վրայ արձակուած նախանձոտ ակնարկն անգամ անոր բազմապիսի առաւելութիւնները պիտի դիտէ:

Աղօթարար

ԵՂԻՇԷ ԵՊՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

Ազնուաշուք

ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Եւն. Եւն. Եւն.

Տէր ,

Հաճութեամբ ստացայ Ձեր Յարգութեան յօրինած Հայ. Թուրք. բառարանին առաջին մէկ խանի տասնեակ տպագրական թերթերը, զորս իմ նկատողութեանս յանձնելու պատիւն ըրած էիք ինծ: Իմ ձեռնհասութեանս սահմանին մէջ՝ ուշադրութեամբ կարդալով Ձեր այս նոր ու կարեւոր գործին խոստմնալից սկզբնաւորութիւնը, կը փութամ բարեյաջող վախճան մաղթել բովանդակ գործին, որ կոչուած է ըլլալ, Ձեր իսկ աշխատասիրութեան ու կարողութեան շնորհիւ, Օսմաներէն լեզուի ուսման պիտանացու գործիք մը Հայ ուսանողութեան ձեռքին տակ:

Շնորհաւորելով Ձեր Յարգութիւնը այս բազմաշխատ ձեռնարկին համար,

Մնամ Ձերդ

Յ. ԳՈՒՐԳԷՆ

29 Յունիս 1907

ԲԵՐԱ

Ազնուաշուք Տէր,

Ձեր խրկած Հայերէն-Տաճկերէն բառգրքի մասը աչքէ անցուցի այնչափ որչափ պարզ թղթատումով մը կարելի էր:

Այս տեսակ պարագաներու մէջ գործածուած հասարակ տեղիքէն խուսափելու համար չպիտի ըսեմ Ձեզի որ ազգին մեծ ծառայութիւն մը մատուցած էք այս գործը երեւան բերելով, կամ Ձեր յօրինածը իր նախորդներէն աւելի կերպով գերազանց է: Ասիկայ այդպէս ըլլալու էր հարկաւ, ապա թէ ոչ նոր բառգրքի մը հրատարակութիւնը չպիտի հասկցուէր: Կը կարծեմ նաեւ որ «Մեծ» անունը տուեր էք անոր՝ այն պատճառով գուցէ որ մեր աղքատ մատենագրութեան մէջ պզտիկը կրնայ մեծ ալ կոչուիլ. համեմատութեան խնդիր:

Այս անմեղ վերապահումներէն ետքը պէտք է սակայն խոստովանիլ որ Հայերէն-Տաճկերէն բառգիրք մը նոր էջ մըն է որ կ'աւելնայ երկու լեզուներու հաղորդակցութեան կարեւոր գործին վրայ: Եթէ նկատողութեան առնենք որ տաճկերէնն ալ ամէն օր բարեշրջութեան մէջ է եւ շարունակ կերպարանափոխուելու վրայ՝ թէ՛ բառերով, թէ՛ ասացուածներով, եւ մերինին պէս՝ գրուած լեզուն դէպի խօսուած լեզուն կը վերադառնայ ամէն վայրկեան, 5—10 տարին անգամ մը նոր բառգրքի մը հրատարակութիւնը գրեթէ անհրաժեշտ պէտք է համարել:

Կարեւորը եւ գովելին Ձեր գործին մէջ այն է որ տաճկերէնին այս հակումը ուշադրութեան առած էք եւ յատուկ ջանադրութիւն մը կը տեսնուի բառերու հոգին —որովհետեւ անոնք ալ հոգի մը ունին մեզի պէս— ուղղութեամբ եւ ճշդութեամբ ներկայացնելու, ինչ որ գրական պարկեշտութիւն կը ցուցնէ, ոչ ամէն բառագրողի տրուած:

Դիտողութիւններ դրի հոն ուր ուրիշներ գովեստներ կը զետեղեն. Ներեցէք որ Ձեզի թելադրութիւնով մը վերջացնեմ նամակս փոխանակ ուրիշներու պէս շնորհաւորութիւններ ընելու Ձեզի, թելադրութիւն՝ աւելի ընդարձակ եւ այն ատեն՝ իրօք աւելի մեծ բառարան մը յօրինելու որուն մէջ հայերուն քիչ ծանօթ Օսմ. գրականութիւնը պատկերանայ իր հոյակապ գիծերովը, թելադրութիւն զոր ի գլուխ հանելու՝ զՁեզ ամէն կերպով կարող կը տեսնեմ:

Մնամ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ

ՊԵՏՐՈՍ ՔՕԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԷՖ. ԷՖ. ԷՖ.

Գերազնիւ բարեկամդ իմ,

Ըստ Ձեր հրաւէրի ուշի ուշով ուսումնասիրեցի “ Մեծ Բառարան Հայերէնէ Օսմաներէն ,, անուն Ձեր լուրջ աշխատասիրութիւնը, զոր ընդ գրոյս Ձեզ կը վերադարձնեմ:

Ձեր այս երկ իւր ճոխ եւ ընտիր պարունակութեամբ լիովին կը համապատասխանէ իւր վերնագրոյն, եւ արդարեւ ցարդ յօրին-

ռամձներէն ընդարձակագոյն է եւ քան ամենայնի յանձնարարելի, վասն զի մինչեւ "Տ" գիրը կը պարունակէ գրեթէ 25-30,000 բառեր եւ հետաքրքիր ընթերցողին աչաց առջեւ կը պարզէ լեզուական ճոխութիւն եւ հետազօտութեանցը՝ կ'ընծայէ ոչ նուազ դիւրութիւն եւ օգտակարութիւն:

Ձեր այս երկին մէջ հայերէն բառերն ունին իրենց համադէպ թուրքերէն, արաբերէն եւ յաճախ պարսկերէն ճշգրիտ համապատասխանները՝ փակագծի մէջ հայերէն արտասանութեամբ ինչպէս եւ գրական եւ փոխաբերական իմաստի եւ ընդարձակ առումի արտայայտութեամբ, մերթ ընդ մերթ լեզուական դարձուածներ, արաբերէն, պարսկերէն եւ ֆրանսերէն ասացուածներ, նոյնպէս այլ յոյժ գործածելի բառեր, պարզագոյններովն համադրձ: Հոն ժրաջան ուսանողն կը գտնէ բառից մեծ պաշարին հետ միանգամայն քերականական կարեւոր ծանօթութիւններ, արաբերէն աներեւոյթներու եւ ներկայ եւ անցեալ ընդունելութեանց եւայլն ձով "էքմէք, օլմագ," ի համառօտագրութիւնը, յաճախ արաբ. բառից համադէպ անկանոն յոգնակիներ, զոր օրինակ "հիքմէթ," բառին դիմաց "հիքէմ," "հըրքէթ," ի՝ "հըրէք," "հիւքմ," ի "ահքեամ," իմաստից տարբերութիւններովն ինչպէս եւ حكم բառին "հիւքմ," "հիքէմ," եւ "հաքէմ," արտասանութիւնը: Հոն հետազօտող թարգմանիչն ակներեւ կը տեսնէ գիտական, պաշտօնական, պատմական եւ աշխարհագրական բառերու ամէնէն գործածականները ֆրանսերէն համապատասխաններով որպէս եւ եռեքլեզուեան բառերու մասին լաւ ընտրութիւն, զանազանութիւն եւ ճշդութիւն:

Վերջապէս Ձեր այս աշխատասիրութիւն՝ ուր աւելորդ բառք տեղ չունին եւ յորմէ անգործածականն վտարեալ է, իւր նոր եւ ընտրելագոյն պարունակութեամբ իւր ծաւալէն՝ երկու երեք անգամ մեծ բառարաններու համահաւասար է. քիչին մէջ շատ, փոքրին մէջ մեծ ըլլալու յատկանիշն ունի:

Ուրեմն ջերմագին կը շնորհաւորեմ զՁեզ ի մասին Ձեր այս լուրջ եւ օգտակար երկասիրութեան եւ կը մաղթեմ որ Օսմաներէն սոյնպիսի կարեւոր երկեր ամ քան ամէ բազմանան մեր Ազգին մէջ որոյ զաւակաց համար համադրձ Ֆրանսերէնով Օսմաներէնի ուսումը իրենց ապագայ կենական հարցերուն զոգցես գլխաւորն է:

Մնամ յաւէտ յարգական զգացմամբ

ՊՕՂՈՍ Գ. ՔԵՐԷՍՏԷՃԵԱՆ

Ազնուաշուք

ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Եւն, Եւն. Եւն.

Սիրելի բարեկամ,

Աչքէ անցուցի Ձեր Հայերէնէ Թուրքերէն բառգրքին այն թերթերը զորս ղրկած էիք ինծի, եւ կը փութամ յայտնել թէ տպաւորութիւնս շատ նպաստաւոր եղաւ Ձեր այդ կարեւոր երկին նկատմամբ։ Ոչ միայն հոգ տարած էք հայերէնի ամէն գործածական բառերուն գլխաւոր առումները ճշտանակել, այլ եւ ջանք չէք խնայած արդի լեզուին մէջ կիրարկուած գլխաւոր ոճերն ու նորակերտ բառերը հաւաքել եւ անոնց իմաստը ճշդելով՝ գտնել համազօր թուրքերէն բառերն ու բացատրութիւնները։ Յայտնի կ'երեւայ թէ խղճամիտ աշխատութեամբ ուզած էք պատրաստել գործ մը, որ կուգայ կարեւոր պէտք մը լրացնել։

Շնորհաւորելով զՁեզ այս նոր եւ օգտակար հրատարակութեան համար

Մնամ միշտ Ձերդ

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

10/23 Յուլիս 1907

Շիշլի

ԱՌ ՄԵԾԱՄԵԾԱՐ

ՊԵՏՐՈՍ ԷՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ ՏՆՕՐԷՆ

եւն. եւն. եւն.

Մեծամեծար Տէ՛ր,

Ձեր «Հայերէնէ Օսմաներէն» Բառագիրքն քննել եւ մեր ուսումնասիրութեան արդիւնքն հաղորդել յանձնարարեալ էր մեզ Ձեր կողմանէ առաքեալ քարդով:

Կարելի է ասել թէ Ձեր գործն իւր ընդարձակութեամբ եւ բովանդակութեամբ իւր տեսակին մէջ առաջինն է. համառօտ բառագրոց կամ ի պէտս թուրքախօս հայոց հայերէնի ուսուցման համար պատրաստեալ տաճկերէնէ հայերէնի բառագրական գործոց խօսքն իսկ անտեղի է: «Մեծ բառարան Հայերէնէ Օսմաներէն» այսինքն ընդարձակ եւ դժուարին աշխատութիւն է արդարեւ Ձերն, որ նիւթոյն գէթ մէկ կարեւոր մասին պատրաստութիւնն կամ հաւաքումն յառաջին ձեռանէ է անշուշտ: Սահմանեալ է այն՝ հայ վարժարանաց աշակերտելոց եւ առ հասարակ օսմաներէն լեզուն ուսանիլ ուզող հայոց եւ հայերէն լեզուն ուսանիլ ուզող թուրքախօս օսմանեանց ձեռաց մէջ շատ օգտակար գործիք լինել իւր հանդերձման մեծ յաջողակութեամբն:

Մեծ գործ արդարեւ թէ՛ այս յաջողակութեան եւ թէ՛ կրեալ դժուարութեանց համար: Դժուարութիւնք հաւասարապէս մեծ են յիրաւի թէ՛ օսմաներէնի մասին համար եւ թէ՛ հայերէնի բաժնոյն: Թէպէտ եւ մեք ա-

ռաջնոյն վերաբերմամբ դատաստան ինչ յայտնելոյ շատ ձեռնհասութիւն չունինք կամ աւելի ուղիղ պիտի լինէր ասել թէ բնաւ իսկ անատակ եմք եւ Ձեր բառգիրքն յայդմ մասին մեզ շատ բան ուսուցանելոյ հանգամանքն ունի, սակայն զգամք եւ գիտեմք այդ դժուարութեանց աստիճանն: Թէ՛ հայերէնի եւ թէ՛ թուրքերէնի համար հաւասարապէս նոր կամ նորաստեղծ է՝ թէպէտ եւ հնոյն վրայ հիմնեալ, եթէ ոչ ըստ նիւթոյն՝ գէթ ըստ իմաստիցն, եթէ ոչ ըստ ամբողջութեանն գէթ ըստ մեծի մասին, բը-նական պատմութեան եւ առ հասարակ բնական գիտու-թեանց բառախօսութիւնն կամ եզրաբանութիւնն (termi-nologie), որպէս եւ քաղաքականութեան, դիւանագիտու-թեան, օրէնսգիտութեան եւ առ հասարակ պարբերա-կան մամլոյ լեզուն, եւ այդ եզրաբանութիւն կամ լեզու կատարելապէս կազմեալ իսկ չէն, եւ եթէ օսմաներէնի համար յաճախ եւ պաշտօնական յիրարկութիւնն եւ մերթ վաւերացումն կերպիւ իւիք հաստատուն հանգամանք ինչ տուած է նմին, արդի հայերէնի համար կարելի է ասել թէ դեռ բոլորովին կերպացման շրջանի մէջ է կամ թէ անկերպարան, անկազմ իսկ է տակաւին: Բնականաբար այս կամ այն գրողի ձեռամբ նորակերտ բառեր կամ նոր առմունք մուտ գտանեն հետզհետէ կամ կերպիւ իւիք ա-ռաջարկեալ լինին, եւ շատ անգամ միեւնոյն գաղափա-րի համար մէկէ աւելի նոր եզերք կամ ձեւք կամ առ-մունք: Հանդէպ բառախօսական այդ բազմախուռն ընդարձակութեան բառագրողին համար երկու եղանակք կան գործելոյ, երկաքանչիւր փշալից, այսինքն՝ կամ բառագրական դարաստանին մէջ տեղի շնորհել ամենայ-նի եւ կամ ընտրութիւն գործել: Առաջին ճանապարհի դժուարութիւնքն կայանան սոսկ բազմախուռնութեան եւ

ժողովելոյ աշխատութեան մէջ. երկրորդիններն՝ նուազ թափառումամբ հանդերձ քննական ոգւով ընտրութեան կամ ճշդելոյ եւ ճիշդքն որոշելոյ գործոյն մէջ: Թող թէ Դուք միջին ճանապարհ բռնած էք խոհեմութեամբ: Առանց Ձեր խոհեմութեան այժմու անկերպարան հայերէն գրականութեան կարի հաւասարիմ ցոլացումն պիտի լինէր Ձեր գործն, յորում յայտնի փոյթ երեւի նաեւ նոր բանասիրական հետազօտութեանց արդիւնքն եւս քաղելոյ, որպէս եւ կարեւոր տեղի նուիրելոյ պարբերական մամլոյ մէջ ճշդեալ կամ նուիրագործեալ առմանց եւ գործնական ասացուածոց: Մինչեւ անգամ մեր դուզնաքեայ բանասիրական հետազօտութեանց արդիւնք որ Տ. Գաբամաճեան Սիմոնի բառագրոց մէջ եւ ի *Ծէրիտէի Շարգիյէ* երեւեալ են՝ ըստ մասին ասպնջականեալ գտանին ի Ձեզ: Ձեր «Մեծ բառարան Հայերէնէ Օսմաներէն» ըստ կարելւոյն լիակատար գործ է ուրեմն յաչս մեր, վասն զի այնպիսի պայմանաց համեմատ պատրաստեալ է որ Օսմանեան Կայսրութեան մէջ իմացական կենաց բոլոր ձեւերն ամէնէն աւելի գործօնէն կամ գործնականէն սկսեալ մինչեւ ամէնէն աւելի հայեցականն, երկու լեզուաց փոխադարձ վերաբերութեանց մէջ կարեն լրումն գտանել իւրեանց ամէն բառագրական կամ բառախօսական կարօտութեանց:

Ահաւադիկ մեր անկեղծ գնահատութիւնք եւ կարծիք Ձեր գործոյն վերաբերմամբ:

Հանեցէք, Մեծամեծար Տէր, ընդունիլ այս առթիւ հաւաստիս խորին յարգանացս, որով Մնամք

Ձերդ

ԽԱՉԻԿ ՈՒՂՈՒՐԻԿԵԱՆ

Սկիւտար-Պաղլարպաշի
12/25 Յուլիս 1907

Ազնուաշուք

ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ազնիւ բարեկամ,

Պատիւ ըրեր էք ղրկել ինծի Ձեր երկասիրած Հայ-Օսմ. բառգրքէն օրինակ մը: Թէեւ աւելորդ չըլլայ անոր ընկատմամբ կարծիքս յայտնել Ձեզ, որչափ որ ոչ մասնագէտի մը կարողութիւնը կ'ներէ: Ամէնէն առաջ ըսեմ թէ Ձեր բառգիրքն յատկապէս Օսմ. լեզուին իսպաս դրուած գործ մ'է անշուշտ, ու խիստ կարեւոր դեր մը կատարել կոչուած է նոյն լեզուի ճշգրտօրէն ու առատօրէն ծաւալման մեր ժողովրդեան մէջ. բայց տեսակէտով մը կրնայ նաեւ այլապէս օգտակար ըլլալ, իբր հայ լեզուի բառգիրք ալ ծառայելով ձեռքին տակ անոնց որք հարկ եղած հմտութիւնն ունին օսմաներէնի: — Կ'դիտեմ որ լաւ թափանցեր էք հայ բառերու նշանակութեանց, ու մէկ կողմ ձգեր էք անոնցմէ շատերուն անստոյգ նշանակութիւնները, բանաւոր ու վերջնական ճշդմանց միայն անսալով, ու հրաժարելով «այսպէս ալ կ'նշանակէ, այնպէս ալ կ'նշանակէ»ի տարտամ մեթոտը: Պաշտօնական, գիտական, եւայլն բառերու առատութիւնն ակներեւ է գործին մէջ, մանաւանդ այդ հանգամանքներն ունեցող բառերուն երեքլեզուեան շարայարումը: Դիտելի են նաեւ օսմ. բաժնին մէջ ուղղագրութեանց նորագոյն ձեւերն հին ձեւերուն քով, յոյժ բանաւոր ուղ-

ղութիւն մը, որուն փոյթ տարեր էք, լեզուին լոկ գրական կամ բանասիրական հանգամանաց հետ նկատի առնելով նաեւ անոր զուտ օգտակարական կամ գործնական հանգամանքը: Արդէն յայտնի է ամէնուն թէ օսմ. ազգին կարեւորագոյն գրողներն այլեւս հին ուղղագրութիւնը չեն կիրարկեր: Բառերու բաղադրեալ գործածութեանց լայն տեղ մը տրուած կ'տեսնեմ Ձեր գործին մէջ. Օրինակի համար, առաջին ակնարկով մը, կ'հանդիպիմ ԳԻԾ բառին, ու կ'դիտեմ որ անոր դիմաց خط چیزکی سطر միայն դնելով չէք անցնիր, այլ կ'թուէք այդ բառին բաղադըրեալ գործածութիւններն ալ. մէջ կ'բերէք «երկաթուղիի գիծ», «հորիզոնական գիծ». «անկեան, երկարիչ գիծ». «խոտոր կամ շեղ գիծ». «ուղիղ գիծ». «կոր գիծ». «միացման գիծ». «հասարակածի գիծ». «գիշերահաւասարի գիծ». «միջօրէականի գիծ». «երկու զուգահեռական գիծեր» եւայլն եւրոպական համարժէքներով՝ հանդերձ օսմաներէնին: Ու կ'դիտեմ ուրիշ Հայ-Օսմ. բառագիրք մ'ալ որ միայն գիծ خط چیزکی سطر ըսելով անցեր է: Միայն այս օրինակը թող բաւական ըլլայ նոյն կարգի հարիւրաւորներու համար եւս: Այդ ուղղութիւնն արդէն պարտաւորութիւն մ'էր Ձեզ համար, քանի որ ո՛չ թէ՝ ուրիշ հեղինակներու պէս՝ գրենական անազնիւ շահագործումն, այլ արդի բառարանական պահանջմանց գոհացումն ունիք նպատակ: Ամէնէն աւելի ուրախալի ուղղութիւնն եղաւ մեր մէջ լքումը հայատառ օսմաներէն բառագրքերու դրութեան, զի այդ դրութեամբ անկարելի կ'ըլլար ներկայացումը բառերուն՝ իրենց բնիկ լեզուին ուղղագրութեամբ, որ առաջին պայմանն է օգտակարութեան: — Ձեր գործին առաւելութեանց կարգէն են, չմոռնամ ըսել, դժուարագիւտ արաբ եւ պարսիկ բա-

ռերու հանդէպ հայատառ հնչումներն՝ խնամով ներկա-յացուած, այնպէս որ նոյն լեզուաց նուազ հմուտ անձե-րու համար գնահատելի առաջնորդներն եղած են անոնք. Այդ առաւելութեանց վրայ երբ աւելցուած ըլլային մէն մի արաբ կամ պարսիկ բառի ազգութիւնն որոշող նշաններ ալ, այն ատեն աւելի՛ կատարեալ կ'ըլլային կատարեալին մօտեցող Ձեր գործին առաւելութիւններն:

Հետաքրքրական կողմեր ալ ունի Ձեր գործն անոնց համար որք այլեւայլ լեզուաց բառերու նմանակցութեան երեւոյթներով կ'զբաղին: Օրինակի համար, բաւական թելադրիչ է ԵՄԱԿ բառին հանդէպ ձեր նշանակած عاج *եէմաճ* բառը (وادی վատի արաբերէնն ալ նշանակուած կ'գտնեմ ԵՄԱԿին հանդէպ, որ ձայնական նմանութիւն մը կը ցուցնէ հայ ՀՈՎԻՏ կամ ՈՎԻՏ բառերուն): ԼԻԶԵԼ բային առջեւ կ'դնէք لحس *լահս*. ԽԻԼԱՑ կամ ԽԼԱՑ բա-ռին դիմաց՝ خلعت *խըլաթ*. ԽԱԼԱՆՁ (bruyère) *ցախաթուփ*, բառին առջեւ կ'դնէք فونده، سپورکه اوتی *ֆունտա*, *սիւփիւրկէ օթը*. կրնայիք աւելցնել նաեւ خلنج *խալէնճ* արաբերէնն, որուն հետ նոյն է գրեթէ մեր մէջ ԽԱԼԱՆՁ բառը: ԽԱԹԱՐ (ում) հայ բառին հանդէպ կ'դնէք بوزمه. اخلال. برباد կրնայիք աւելցնել արաբերէն خطر *խաթար*, خطرات *խաթա-րաթ*, ձայնի եւ իմաստի մեծ նմանութեամբ: Եւ երբ նոյն իսկ այսպիսի ընտիր երկասիրութեանց մասին անպա-տառ խծբծանք մը գտնել սովորական բան մ'է, պիտի ըսէի թէ ինչո՞ւ համար ՄԱԶ բառին առջեւ դրուած է کیسو (կիսու) պարսկերէն, փոքրիկ իրաւամբ, իսկ ԳԷՍ բառը բոլորովին կ'պակսի բառգրքին մէջ, որուն հանդէպ նոյն کیسوն պիտի դրուէր մեծագոյն իրաւամբ: ԱՂՈՒ բառը կա՛յ նշանակուած حلوا (հալավէքլի) փոխարժէքով. բայց ԱՂՈՒՈՒԹԻՒՆ բառը չունիք, զոր երբ ունենայիք,

այն ատեն լաւագոյն պիտի համարէի ԱՂՈՒին հանդէպ դնել حلو (հուլվ), իսկ ԱՂՈՒՈՒԹԻՒՆին حلاوت (հալավէթ). ԳՂԳՂՈՒՆՔ բառին առջեւ կ'դնէք غور غور. غورلق, իրաւամբ. իսկ ես լաւագոյն պիտի համարէի غلغل (կուլկուլէ կամ ղուլղուլէ)՝ աւելի եւս իրաւամբ, քանի որ ձայնական նմանութիւնն ալ գոհացում կ'ստանար այդու: Հայերէն ԿՈՀԱԿ բառը նշանակած էք, եւ անոր փոխարժէքը գտնելու համար (թուրքերէնով, պարսկերէնով կամ արաբերէնով) ընթերցողը կ'ղրկէք ԱԼԻՔ ին: Իրաւունք ունիք. բայց լաւ էր զանց չընել ԿՈՀԱԿ ին միւս նշանակութիւնն ալ, այն է՝ Լեառն, Բարձրաւանդակ, Սար: Այս երկրորդ նշանակութիւնն, զոր աւելի եւս յարգի կ'գտնեմ ես, եթէ տուած ըլլայիք ԿՈՀԱԿ ին, անշուշտ պիտի դնէիք անոր առջեւ كوه (կիուհ) (լեռ) պարսկերէնն ալ, առանց ընթերցողը լոկ ԱԼԻՔ ին ղրկելու: ԴԱՂՈՒԿ բառին առջեւ դրեր էք يرقان *եէրգան*՝ յոյժ իրաւամբ. իսկ ես կ'փափաքէի որ ԱՐԵԳԱՆ բառն ալ գրընուէր ձեր բառգրքին մէջ, որպէս զի անոր *(արէգան)*ին ու *եէրգան*ին քով քովի երեւումն ալ աւելի թելադրիչ ըլլար ձայնական տեսակէտով, մանաւանդ որ այդ կերպով յայտ պիտի գար թէ *արէգան* հայերէնն ընտիր բառ մը չէ, արաբերէնէ տառադարձեալ ըլլալով: ԳՈՒՆԴ բառին առջեւ դրած էք բաւական նոխ կերպով թուրք, պարսիկ, արաբ համարժէքներ كومه. آلاى. سورى. طاقم. فوج. كروه բառերը. բայց զանց ըրած էք جند *ճիւնտ*. արաբերէնը — անշուշտ անոր համար որ այս վերջինս գործնական կարեւորութիւն մը չունի, այլ լոկ լեզուաբանական: Անտեղի ըլլայ նամակի մը մէջ երկարօրէն խօսիլ այս տեսակ նիւթերու վրայ: Նամակիս նպատակն է յայտնել Ձեզ թէ մեծապէս կ'գնահատեմ Ձեր գործն իր բազմար-

դիմի օգտակարութեանց համար, գերազանց կը գտնեմ զայն՝ բոլոր նմանօրինակ գործերու հետ զայն համեմատելով, կ՚հիանամ այն աշխատասիրութեան վրայ զոր անդուլ ի հանգէս կ՚բերէք օսմանեան լեզուի վերաբերեալ գործերու մէջ, որոց մէջ նշանաւորագոյն տեղը բռնել կոչուած է, կարծեմ, ձեր այս բառագրական գործը: Անշուշտ՝ վերջինը պիտի չըլլայ Ձեր երկասիրութեանց՝ այս նորաձոյլ բառգիրքը. կ՚սիրեմ զայն խարիսխ մը համարել ապագայ ընդարձակագոյն գործի մը, զոր ձեր աշխատասիրութենէն ու կարողութենէն սպասելու իրաւունք ունի ամէն ոք: Երանի՛ թէ ըստ արժանին քաջալերուէր այն՝ մեր բանիմաց հասարակութեան կողմէ:

Մնամ Ձերդ

ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

14 Յուլիս 1907
Եէնի Գիւղ

Առ Մեծայարգ բարեկամն իմ

ԱԶՆ. ՊԵՏՐՈՍ ԷՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԲԱԶՄԱՐԴԻՒՆ ԵՒ ՅԱՋՈՂԱԿ ՈՒՍՈՒՑԻՉ
ՕՍՄ. ԱՐԱԲ. ԵՒ ՊԱՐՍԿ. ԼԵԶՈՒԱՑ
եւն. եւն. եւն.

Ազնիւ եւ սիրեցեալ բարեկամս,

Ուրախութեամբ տեսայ Ձեր նոր հրատարակած «Հայերէնէ Օսմաներէն Մեծ Բառարանը» եւ ուշի ուշով կարդացի զայն: Մեր ազգային վարժարանաց ուսանո-

դութեան համար խիստ նպաստակայարմար եւ օգտակար լինելու սահմանուած գործ մ'է այն :

Իւրաքանչիւր հայերէն բառի դիմաց թուրքերէն, արաբերէն եւ պարսկերէն գործածական բառերու նախ հաւաքածոյ մը ըրած էք : Երբեմն ալ գիտական եւ այլ կարեւոր պաշտօնական բառերը լաւ բացատրող գաղիերէն բառերով ճոխացուցած էք Ձեր աշխատութիւնը եւ օգտակարագոյն ընծայած էք զայն : Ըստ իս ցարդ երեւցած նմանօրինակ աշխատութեանց գերազանց կրնայ նըկատուիլ Ձերը շատ մը տեսակէտներով : Եւ եթէ չափաւոր գնով մը զայն հրապարակ հանէք, ինչպէս որ մըտադրած էք կ'ըսուի, կրկնապէս օգտակար հանդիսացած պիտի լինիք մեր հայ ուսանողութեան, որոյ Օսմաներէն կարեւոր լեզուն դիւրին եղանակաւ ուսուցանելու համար ցարդ ի լոյս ածած Ձեր բազմաթիւ երկասիրութիւններն իրաւամբ գնահատուած են մեր համայնքին կողմանէ :

Կը շնորհաւորեմ ուրեմն սրտագին զՁեզ, ազնիւ եւ սիրեցեալ բարեկամս, եւ յաջողութիւն կը մաղթեմ սոյն գեղեցիկ երկասիրութեանդ՝ Հայ-Օսմաներէն բառարանիդ :

Մնամ յարգանօք

Ձերդ

ԱՐԻՍ ՖԷՍՃԵԱՆ

16 Յուլիս 1907
Բանկալթի

Բերա, 22 Յուլիս 1707

ՄԵԾԱՅԱՐԳ

ՊԵՏՐՈՍ ԷՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Եւն. Եւն. Եւն.

Աստ

Հայ գրական, գիտական, արուեստական եւ մինչեւ իսկ ընտանի ու ռամկական բառերու ճոխառատ պաշարով մը բեռնաւոր, Ձեր փորձ եւ քաջահմուտ մասնագէտի խղճամիտ եւ հոգածու ջանքերուն արդիւնք, գեղեցիկ եւ օգտակար գործ մը Հայերէնէ Օսմաներէն Ձեր «Մեծ Բառարան»ն որուն համար կ'ուղղեմ Ձեզ բարեկամի անկեղծ շնորհաւորութիւններս։

Ձերդ

ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵւՆ.   ԵւՆ.   ԵւՆ.

Դպրոցակից Եղբայրս ,

«Եւ Դուք մին էք այն քաջուսումն երիտասարդներէն զորս ընծայած լինել Ազգին՝ պատի՛ւ է Պէրպէրեան Վարժարանին» ։ Այսպէ՛ս սկիզբ կուտար լուսահոգի դաստիարակնիս իր մէկ նախաբան-նամակին , զետեղուած՝ իր գիտնական սաներէն մէկուն երկասիրութեանը ճակատը ։ Ու ես վայելուչ սեպեցի նոյն պարբերութիւնը Ձե՛զ կիրարկել հիմայ , Ձե՛զ որ տարիներու տքնութենէ խոնջ՝ կուգաք այսպէս հայ ուսանողութեան ընծայել Ձեր բառգիրքը , պիտի ըսէի՝ Ձեր փառքի՛ գիրքը :

Պատիւն էիք ըրած օրինակ մըն ալ իմ անուանս խրկելով կարծիքս առնալու բառարաննուդ մասին ։ Ինչ որ հապճեպ թղթատումիս մէջ կրցի նշմարել , խղճամիտ պրպտումներով շարուրուած բառամթե՛րքն էր ան՝ մեր մեռեալ ու կենդանի լեզուներուն , Գրաբարի թանգարանէն ընտրողաբար , իսկ Աշխարհաբարի գանձարանէն գրէթէ անխտիր քթուըտելով բառեր՝ որոնք առօրին գործածութեան մէջ են , կազմելով թունահմայքը Հայ լեզուին ։ Գալով Նորակերտ բառերու , — որոնք անլկամ արշաւել սկսան սա վերջին ատեններս աշխարհիկ լեզուին մէջ , ածուներն ու կածանները յաճախ աւրշտըկելով Գրականութեան կալուածին , — ուրախ եմ որ խելացի փրթեր էք կիրթ ճաշակով մը անոնցմէ զեղչելով անճոռնիներն ու բարդութեան օրէնքի դէմ մեղանչողնե՛րը մանաւանդ , ատանկով թումբ կանգնած ըլլալով Տէմիրճիպաշեանական նորաբանութեանց խոլ գրոհումի մը առաջքը ։

Լրագրութեամբ նուիրագործուած բառեր , — քանի մը տասնեակ կամ աւելի , — ինչպէս նաեւ բնապատմութեան , արուեստից ու գիտութեանց պատկանող խրթին և դուն ուրեք կիրարկելի բառերէն բաւական մը գուցէ վրիպած ըլլան ձեր յիշողութենէն կամ ձեռագիր բառացուցակէն , գիրքը խմբագրած ատեննիդ ։ Բ. տպագրութեան ատեն , դիւրին պիտի ըլլայ Ձեզ համար անշուշտ սակաւաթիւ այդ պաշարն ալ մէջը տեղաւորելը , ինչ որ հեռու չէ ստուգիւ , վասն զի տարակոյս չու-

Նմ թէ ստուար և յոգնավաստակ այդ հեղինակութիւնը լաւ ընդունելու-
թիւն պիտի գտնէ հայ ուսանող մանկութենէն, հայ ուսուցչութենէն ու
գրասէր հասարակութենէն առ հասարակ, անոնց ձեռքին մէջ դառնալով
բառգիրք մը — խղոտուա՛ծ ու փայլուն, — հայերէնէ թուրքերէն և փո-
խադարձ է՛ն մաքրինծ թարգմանութիւններու ատեն իսկ։ Բալլինքին-
այդ խղոտումն ու փայլունութիւնը կը կազմեն ահա կարգ մը բառերու
և բայերու առընթեր զետեղուած ոճերը, ասութիւններն ու յատկաբա-
նութիւնները, — է գի ֆրանսերէններու դէմյանդիմանութեամբ, — ո-
րոնցմով հանրագիտակ հանգամանք մը զգեցած է աշխատասիրութիւնդ,
արժանի՛ շնորհաւորութեան։

Էյ ուժուրուլ ճիպար, թիւնալու պիլ ճիմճիմիլ ճիպար կ'ըսէ
Արաբ. իմաստասիրութիւնը։ Այո՛, մեծ գործերը մե՛ծ ջանքերով կը
գործուին։ Ու բառագի՛ր մը մանաւանդ կրնայ լրիւ դատել Ձեր գործը
և երեւակայել դժպհի տատանքն ու ամնէ տաժանքը՝ զոր տարինե՛ր
տարիք՝ գիշերը ցորեկին խառնելով, թերթատելով, թղթատելով, թար-
թափելով, կերպարանելու համար այդ հատորը, գեղահիւս և անթառամ
պսակը Ձեր փնդուլ տքնութեանց։

Կրնամ վստահ ըլլալ թէ Ձեր նիկը հայերէնի բառգի՛րք մըն ալ է,
այսոր առաջնորդ մը հայերէնէ հայերէն լիակատար բառարանի մը պատ-
րաստութեան պահուն։ Վաղը միւս օր այս ու այն թերթին մէջ գրախօ-
սականներ պիտի երեւան անշուշտ Ձեր գործին վրայօք, զուրցածներս
հաստատող և անոր՝ դեռ ուրիշ առաւելութիւններն ալ թուող։ Գուցէ
գտնուին ալ անանկներ որոնք կեանքերնուն մէջ պրակ մը բան չի հե-
ղինակած՝ խիծ ու բիծ որոնել ուզեն Ձեր բառգիրքին էջերում, անոր
վրայ առուեր ածելու գործ մտադրութեամբ։ Դրուատիք և դարով առաւել
կա՛մ նուազ քանակաչափով, երկասիրողի բաժին եղած են ամէն ատեն։
Դուք հայ համայնքին ի՛սկապէս օգտակար հանդիսացած ըլլալու գոհու-
նակութիւնն ունեցէք սոսկ, և ընդունեցէք Ձեր գրչի եղբօր ջերմ
խնդակցութիւնները։

Ձեր յարգալիր

ԹԷՈԴԻԿ

Մօտա, 25 Յուլիս 1907

Եւդոկիա, 27 Յուլիս 1907

Ազնուաշուք

ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կ. Պոլիս

Ձեր Յունիս 13 ամսաթիւ նամակին հետ ատենին ստացայ Ձեր նոր հրատարակած հայ-օսմաներէն բառարանը: Այդ միջոցին սակայն պզտիկ ճամբորդութիւն մը կատարելու հարկին տակ գտնուելով 10 օրուան չափ բացակայեցայ քաղաքէս եւ վերադարձիս միայն, այն է՝ 4 օր առաջ առիթն ունեցայ աչքէ անցընելու Ձեր երկասիրութիւնը զոր Ձեր նոյն նամակով ուզած էիք յանձնել իմ ուսումնասիրութեանս փափաքելով որ արդիւնքը Ձեզի հաղորդեմ մէկ երկու շաբաթէն:

Նկատի առնելով մասնաւորապէս օսմաներէն լեզուի մէջ Ձեր ունեցած ծանօթ եւ անժխտելի ձեռնհասութիւնը եւ զայն բաղդատելով իմ համեստ բանասիրութեանս հետ, կը խորհիմ թէ պատիւ մը կ'ընծայէք ինծի Ձեր գործը յանձնելով իմ ուսումնասիրութեանս, բան մը՝ զոր կարողութեանս սահմանին մէջ հաճոյքով պիտի կատարէի եթէ Ձեր տուած պայմանաժամը խիստ կարճ եւ արդէն իսկ լրացած չըլլար: Ասոր հետ մէկտեղ՝ քանի մը օրուան թղթատումներու եւ դիտողութիւններու բաւական եղան զիս համոզելու թէ

Ձեր բառարանը խղճամտօրէն աշխատուած եւ աննախընթաց գործ մըն է որ կոչուած է խիստ կարեւոր պէտք մը լրացնելու, դիւրացնելով օսմանեան գեղեցիկ լեզուին ա՛յնքան անհրաժեշտ ուսումը: Հոն — Ձեր բառարանին մէջ — յաջողութեամբ թարգմանուած գտայ նշանակութիւններն ու առումները հայ լեզուի գրեթէ բոլոր բառերուն, մէկն ըլլալով արդի գրական բառերու հետ նաեւ գաւառական - ռամկական կարգ մը գործածական դարձած բառեր: Ինչպէս գործը ցոյց կուտայ, անտես եղած չեն նաեւ հայ լեզուի ոճերն ու ասացուածները եւ այս ամէնուն հետ մէկտեղ՝ բառերու առումները հասկնալի ընծայելու համար դրուած օրինակները, Օսմաներէն դժուարին բառերու առջեւ դրուած հայատառ հնչումները եւ երբեմն ալ աւելցուած փրանսերէն նշանակութիւնները ա՛յնպիսի առաւելութիւններ են՝ զոր Ձեր բառարանը գործածողները լիովին պիտի կրնան գնահատել:

Շնորհաւորելով ուրեմն Ձեզ Ձեր այս մեծարժէք աշխատասիրութեան համար, կը մաղթեմ որ անիկա գտնէ մեր մէջ այն ընդունելութիւնը որուն արժանի է:

Ձերդ յարգական բարեւներով

ՅՈՎ.Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մաքրի-Գիւղ, 29 Յուլիս 1907

Ազնուաշուք

ՊԵՏՐՈՍ ԷՖԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

եւն. եւն. եւն.

Ազնիւ եղբայրակից,

Ձեր «Հայերէնէ Օսմաներէն Մեծ Բառարան»ը աչքէ անցուցի: Այս բազմաշխատ գործը հոյակապ պսակն է Ձեր բազմաթիւ դասական երկասիրութեանց որոնցմով հարթեցիք Օսմ. լեզուի ուսման բոլոր դժուարութիւնները:

Երկու տարբեր լեզուներով բառարան մը յօրինել՝ կը նշանակէ պարզապէս լեզուի մը բառերը ուրիշ լեզուի մը թարգմանել, մինչ որ պարզ ու դիւրին աշխատութիւն մըն է ըստ ինքեան, եւ աշխատասիրողը թարգմանիչ մըն է յաւէտ քան հեղինակ:

Բայց այսպէս դատել ուղիղ է այն պարագային միայն, երբ բացատրելի լեզուն իր վերջնական կազմակերպութիւնը ստացած է արդէն եւ ունի իր լիակատար բառարանը, ուր բառերու եւ ոճերու բովանդակ միտքը ճշդուած է եւ անոնց նշանակութիւնները, առումները ու գործածութիւնները ճշգրտուած են:

Սակայն խնդիրը հիմնովին կը տարբերի, երբ բացատրելի կամ թարգմանելի լեզուն Արդի Հայերէնն է, որ չունի դեռ իր կատարեալ եւ վաւերական բառարանը, ըստ

որում տակաւին իր կազմակերպութեան ընթացքը աւարտած չէ, եւ անկէ որ այնչափ փոփոխութիւններ կ'ընէ Գրաբարի ու Գաւառաբարբառներու ճոխ գանձարաններէն, եւ միւս կողմէ, նորանոր պէտքերու հարկին տակ, շարունակ կը ճոխանայ նորակերտ բառերով որոնք ցանուցիր կը մնան աշխարհաբար մատենագրութեան եւ պարբերական հրատարակութեանց էջերուն մէջ: Հետեւաբար, հայերէնէ դէպ ի որ եւ է լեզու մը բառարան յօրինելու համար՝ մթերուած, դասաւորուած աւանդն է որ կը պակսի նախ: Պէտք է հաւաքել, կազմել այդ աւանդը: Եւ այս գործը դիւրին չէ բնաւ: Անհամար պրպտում, անխոնջ հետազօտութիւն, ուշադիր ուսումնասիրութիւն ու բաղդատութիւն կարեւոր են:

Մինչ ուրիշ լեզուներու համար՝ երկար դարերու ընթացքին մէջ բազմաթիւ աշխատակիցներու գործունէութիւնը հազիւ բաւած է այս դժուարին գործը գլուխ հանելու, Դուք միս մինակ կատարած էք զայն յաջողապէս. եւ իրաւունք ունինք պարծենալու թէ Ձեր գործին ՀԵՂԻՆԱԿՆ էք բառին ամէնէն հարազատ իմաստովը. քանզի Դուք Հայերէն բառերու Օսմ. համապատասխանները նշանակելու թարգմանչական աշխատութենէն անհունապէս գերազանց բան մը ըրած էք.— այս առիթով յօրինած էք նախ Արդի Հայերէնի բառարանը, որ մինչեւ հիմայ երեւցածներուն մէջ ամէնէն ճոխը եւ ամէնէն կատարեալն է իրաւ որ:

Մեր Հին ու Արդի լեզուներուն բոլոր գործածական բառերը, ինչպէս նաեւ նորակերտ բառերու ընտիրագոյն ու ընդհանրացած մասը, քովէ քով եկած միացած են Ձեր հոյակապ բառարանին մէջ: Եւ սակայն Ձեր գործին առաւելութիւնը՝ բառամթերքի կատարելութեան մէջ չի կայանար միայն:— Նշանակութեանց ճշդութիւնը, առումներու պատշաճ դասաւորումը, օրինակներու յաճախութիւնը,

ամ․ համապատասխաններու ճշգրտութիւնը եւ գիտական, պատմական, աշխարհագրական ու պաշտօնական բառերու ֆրանսերէն համապատասխաններուն յաւելումը՝ գրեթէ անթերի կատարելութիւն մը ընծայած են Ձեր այս պատուական երկասիրութեան:

Այս կատարելութիւնը կը հիացնէ զիս, Ազնիւ եղբայրակից, բայց չի զարմացներ բնաւ. վասն զի ամէն մարդ գիտէ թէ Դուք մէկն էք այն հազուագիւտ անձնաւորութիւններէն որոնք իրենց վրայ կը մարմնացնեն անվիճելի ձեռնհասութիւն, աննկուն կամք եւ անխոնջ ու յարատեւ ջանասիրութիւն. յատկութիւններ որոնք էական պայմաններ են այսպիսի մեծ յաջողութիւններու համար:

Ձեր «Մեծ Բառարան»ը կոչուած է՝ ո՛չ միայն գերընտիր եւ ապահով առաջնորդը ըլլալու Օսմաներէն լեզուով սպառապողներուն եւ անոր մէջ հետզհետէ զարգանալու պէտք ունեցողներուն, այլ եւ երկար ատեն անիկա պիտի կրնայ ամէն թուրքահայու ծառայել իբրեւ ճոխագոյն ու լաւագոյն բառարանը Արդի Հայերէնի: Այսօր, գրեթէ ամէն թուրքահայ օսմաներէնի գոնէ հասարակ ըմբռնումը գիտէ, եւ այնչափն ալ արդէն կը բաւէ Ձեր բառարանին բովանդակած բոլոր հայերէն բառերուն նշանակութիւններն ու բացատրութիւնները հասկնալ կարենալու համար:

Ուստի կը փութամ շնորհաւորել, Ազնի՛ւ եղբայրակից, Ձեր այս հոյակապ յաջողութիւնը, եւ կը փափաքիմ որ քիչ ատենէն ՕՍՄԱՆԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆը զայն զոյգ մը կազմել Ձեր այս պատուական երկասիրութեան հետ:

Մնամ յարգանօք

Վ. ՆՇԱՆ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅԵՐԷՆԷ ՕՍՄԱՆԵՐԷՆ

ԳԻՏԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՌԵՐՈՒ ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ

ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ

ԲԱԶՄԱԹԻՒ ՈՃԵՐՈՎ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ

ՃՈԽԱՅԱԾ

Ա

Ա. 1. ارمنیجه نك برنجی حرفی· ارمنیجه نك برنجی حرف املاسی· 2. یر· واحد (պիրինճի)· 3. برنجی· اول (էվվէլ) [Ցէօ. اولی اولی ــــ]

Ա՜. آ! · آه! · واه!· وای!· آ!

Աբբահայր · ارککلر · باش پاپاس · مناسترینك رئیسی· باش راهب· عمر راهب (րահիպ պաշը)· رئیس دیر (տէյր րէիսի)· رئیس رهبان (րուհպան րէիսի)

Աբբայ · پاپاس · راهب [Ցէօ. رهبان · رهابین ռուհպան· ռէհապին]

Աբբայարան· [Ցէօ. ادیار] مناستر· دیر

Աբբայուհի · (րահիպէ) راهبه

Աբեթ · قاو· amadou

Աբել · (Հապիլ) هابل· Abel

Աբեղախոտ· قره باش اوتی· قره باش· stéchas · چچکی·

Աբեղայ· (րահիպ) راهب · کشیش · زاهد (զահիտ) · منزوی (մունզէվի) · تارك دنیا (թարիքի տիւնեա)

Աբեղայական· کشیشلره منسوب · راهبانه (րահիպանէ)

Աբեղայութիւն· راهبلك · کشیشلك

Աբեղուկ · تپه لی ترلا قوشی · تپه لی
Աբեղածակ · تویغار قوشی· تپه لی چایر قوشی

Աբրահամ · ابراهیم· حضرت ابراهیم·
Հայր — · خلیل الله (Խալիլ ուլլահ) ابراهیم نبی (Իպրահիմ նէպի)

Ագահ· خسیس [Ցէօ. اخسا ـــــ] بخیل (պախիլ) [Ցէօ. بخلا պուխէլա] · حریص (հարիս)· ناکس [աղաւաղ․ն է] · نکس (նէքէս)]· طمعکار (թամահքեար)

Ագահաբար · خستله (խասիսլէ)·
— օրէն · خسیسانه · بخیلانه· حریصانه· طمعکارانه (թամահքեարանէ)

Ագահամիտ· Տ. **Ագահ**

Ագահանալ· خسیسلنمك· خسیس او· طمعه دوشمك (թամահա տիւշմէք)· طمعکار او·

Ագահութիւն · (խըսէթ) خست

خساست ([illegible]) . ناكسلك . بخل ([illegible]). طمع. طمعكارلق. حرص([illegible])

Ագաղաղ. ([illegible]) ديك . خروس

Ագանելիք([illegible]) كيهجك. روبا. لباس([illegible]) . اثواب ([illegible]). [جه. البسه [illegible] . ملبوسات. جامه ([illegible]) [illegible] *սխալ է*]

Ագանել. Տ. Հագնիլ

Ագանիլ([illegible]) قوناق. بيتوتت ([illegible])

Ագատ. 1. قوي‌وقسز. 2 دائرۀ متقاطعه ([illegible]) . استقرارين و اعتدالين دائره‌لرى ([illegible]) colure

Ագարակ. [جه. چفتلكات] چفتلك *Ասաց . Կայսերական —նեը Տիպար ագա- րակ* . چفتلكات همايون نمونه چفتلكى ([illegible])

Ագարակաբանութիւն. فن زراعت agrologie ([illegible])

Ագարակաբաշխ
Ագարակագէտ } فن زراعت متفننى ([illegible]) agronome

Ագարակապան. چفتلك . چفتجى صاحبى يا مستأجرى

Ագարիկոն. آغاج منطارى. چاير منطارى. قوزى منطارى agaric.

Ագեւոր. ([illegible]) دمدار . قوي‌روقلو ([illegible]) دمباله‌دار . ذوذؤابه ([illegible])

Ագի. ([illegible]) ذنب . دم . قوي‌روق ([illegible]) . دمبال ([illegible]) . دمباله ([illegible]) . ذؤابه ([illegible]) . [جه. ذوائب [illegible]]

Ագոյց. 1 صيريق. 2 حلقه. 3 كليد كوپريسى

Ագուգայ. كنك . بورى. صو يولى . مجرى ([illegible]) . مجرا [جه. مجارى [illegible]] قنات ([illegible])

Ագուռ. 1. آغوج . آووج . كف. ([illegible]) 2. طوغله ([illegible])

Ագուցանել. طاقمق . ايچنه كچيرمك . بندرمك. لامبه ايتمك

Ագուցիկ. ميغلامه . كچمه . طاقمه. كيدرمه ([illegible])

Ագռաւ. ([illegible]) غراب. قوزغون. قارغه. [جه. اغربه [illegible] غربان [illegible]] . زاغ

Ծը— ([illegible]) دكز قارغه‌سى

Ագռաւուկ. 1. مايموبجق. 2. طاوشان كليدى. 3. چنكل. چنكال

Ադամ. ([illegible]) آدم. حضرت آدم ([illegible]) ابو البشر ([illegible]) . حضرت آدم عليه السلام ([illegible])

Ադամաթուզ. (*Բուս.*) ([illegible]) موز

Ադամաթզենի. (*Բուս.*) موز آغاجى figuier d'Adam , figuier bananier

Ադամոկանք
Ադամայինք } حضرت آدم اوغللرى . بنى آدم ([illegible]). بنى بشر ([illegible]). آدميان ([illegible])

Ադամամութ. فوق العاده قراكلق. پك مظلم ([illegible]). تاريك ديجور ([illegible])

Ադամանդ. ([illegible]) الماس

Ադամանդեայ. الماسدن. الماسلى

Ադեն, Ադին. فردوس . ([illegible]) عدن. ([illegible])

Ադլանտեան.(*Աշխ*)([illegible]) آطلاسى *ասաց.* — **ովկիանոս** بحر محيط آطلاسى ([illegible]) Océan Atlantique

Ագազիլ. قورومق. يابس اولمق. كسب يبوست ا . ([illegible]) . تجفف ا. ([illegible])

Ազազուն. ([illegible]) 1. قورو. يابس خشك ([illegible]) 2. قورو. نحيف ([illegible]). پك ضعيف و لاغر ([illegible])

Ազապ. Տ. **Ամուրի**

Ազատ. 1. سربست ([illegible]). آزاد.

سربست Օր. [ազատ մեծցած տղայ մըն է
بیومش بر چوجقدر] 2. مختار ([illegible])
Օր. [այս գիրքը գնելու մասին ա-
զատ եմ [بو کتابی مبایعه اتمکده مختارم
